



ISSN 2579-2687

ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱԶԻ ԱՄՍԱԹԵՐԹ

Երևանի Կոմիտասի անվան Պետական Կոնսերվատորիա

Yerevan Komitas State Conservatory

Ереванская Государственная Консерватория им.Комитаса

ԵՐԱԺԻՇ

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (208)

4 ապրիլ 2023

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 108-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ



Ի ՀՐԾԱՏԱԿ ՀԱՅ ՀՈԳԵԿՈՐ ԵՐԳԻ ԱՌԱՔՅԱԼՆԵՐԻ. ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ ԵՎ ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՆ



Մերոպ Մաշտոցի անվան լեզվի և խոսքի մշակույթի կենտրոնի նախագահ Նադյա Անտոնյան, թանգարանի տնօրեն՝ Սուսաննա Դավթյան, տուն-թանգարանի հիմնադիր՝ Բաֆֆի Պալյան (Լուս Անջելես)



«Մշակույթի բնագավառում հայ-ռուսական կրթական» առաջին համաժողովը Երեւանում



Կոմիտասի անվան ԵՊԿ ղեկավար Սոնա Դովհաննիսյան և Նիժնի Նովգորոդի Ղլինկայի անվան կոնսերվատորիայի ղեկավար Յուրի Գուրկիչ



Հայոց ցեղասպանության ապրիլյան օրերին Երեւանում քայվեց «Նեմեսիս»-ի հերոսների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշակոթող



Հայոց ցեղասպանությունից շուրջ մեկ դար անց Երևանի սրտում՝ Օդակաձև զբոսայգու չորրորդ հատվածում, հանդիսավորությամբ բացվել է «Նեմեսիս» գործողության հերոսների հիշատակը հավերժացնող աղբյուր-հուշակոթող, տեղեկացնում են քաղաքապետարանից: Սողոմոն Թեխլիրյան, Արամ Երկանյան, Արմեն Գաբո, Գրիգոր Մերջանով, Արա Սարգսյան, Ավետիս Իսահակյան, Հրաչ Փափազյան, Շահան Նաթալի, Հակոբ Մելքունով, Երվանդ Ֆունդուկյան, Միսաք Թորաթյան, Արշավիր Շիրակյան, Արշակ Եզդանյան, Ստեփան Ծաղիկյան, Արտաշես Գևորգյան, Պետրոս Տեր Պողոսյան. 1915թ. Հայոց ցեղասպանությունը կազմակերպած և իրականացրած երիտթուրքերի պարագլուխներից, ինչպես նաև 1918թ. Բաքվի հայերի ջարդի կազմակերպիչներից վրեժ լուծած հերոս հայորդիների պատմությանն այսուհետ սերունդները կծանոթանան նաև այս հուշարձանի միջոցով, որը հարգանքի տուրք, յուրօրինակ խոնարհում ու հայրենիքի համդեպ պատասխանատվության պատգամ է: Աղբյուր-հուշակոթողը տեղադրվել է Երևանի ավազանու միաձայն որոշմամբ, քանդակի հեղինակն է Ճարտարապետ Տիգրան Բարսեղյանը: Հարկ է նշել, որ հուշակոթողի տեղադրման միջնորդությունը ներկայացրել էին Հայոց ցեղասպանության վրիժառուների ժառանգները:

<https://www.usanogh.am/glxavor/nemesis-yerevan-vrej-vrijarutyun/>

ՎՈԿԱԼ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՐԳ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ



Դովհաննես Կարապետյան, պրոֆեսոր Կարինե Սկրտչյանը և նրա դասարանը, կոնցերտմայստեր՝ Հռիփսիմե Աղաբաբյան, Նարեկ Բաղդյան, Արտակ Ավագյան, Միքայել Սարգսյան



ՀԱԶԱՐԱՄՅԱԶ ԲԱՐԱԲԱՅԱՆԻ ԹՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՆՎՈՂ ԱՐԿԵՍՏԸ



Գարի Ավագյանը և նրա ջազ անսամբլը հյուրախեղերին Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում, Երևան

ՎԱՏԱԿ ԲԱՅԼԵՐ ԴԵՊԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԱՇԽԱՐՀ

2023
ԱՊՐԻԼ
19
19:00

ԱՐՈՒՆ ԲԱՅԱՅԱՆԻ ՀԱՄԵՐԳԱՐԱՐԱՐ
ARNO BABAJANYAN CONCERT HALL

"Поглощеною зеленою"

TCHAIKOVSKY
CHAMBER ORCHESTRA

CONDUCTOR: DAVID MARUKHIAN
ЧАЙКОВСКИЙ КАМЕРНЫЙ ОРКЕСТР
ДИРИЖЕР: ДАВИД МАРУХИАН

ՏՈՒՆԻՔԻ ՀԱՐԱՐ
TICKETS
3 080 881717

3 080 276000

Լուսինե Անանյան
Տաթև Խաչատրյան
Յուրա Խաչատրյան
Արտյոմ Խաչատրյան
Ալեք Նազարյան

Սոֆյա Օսանկին
Աննա Անանյան
Տաթև Արդույան
Եվա Արդույան
Միկայել Արդույան
Արթուր Ավետիսյան
Ալեք Նազարյան

Ս. Ս. Պրոկոֆև
Ս. Ս. Պրոկոֆև
Ս. Ս. Պրոկոֆև
Ս. Ս. Պրոկոֆև
Ս. Ս. Պրոկոֆև
Ս. Ս. Պրոկոֆև
Ս. Ս. Պրոկոֆև



«Մշակույթի բնագավառում հայ-ռուսական կրթական» առաջին համաժողովը Երեւանում

1 Ապրիլի 27-ին Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում մեկնարկեց «Մշակույթի բնագավառում հայ-ռուսական կրթական» առաջին համաժողովը: Միջոցառումները տեւելու են մի քանի օր՝ ապրիլի 27-29 և կավարտվեն «Մոսկվա» կինոթատրոնում «Ռուսական կինոյի օրեր»-ի բացման արարողությամբ:

Համաժողովի մեկնարկին և լիագումար նիստին մասնակցում էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, Ռուսաստանի մշակույթի նախարարի տեղակալ Վլադիմիր Օսինցևը, Վոլոգդայի և Կոստրոմայի մարզերի մշակույթի դեպարտամենտների տնօրեններ Վլադիմիր Օսիպովսկին և Մարինա Նազինան, ինչպես նաև մշակութային և

նել է ներկայներին և շնորհավորել մշակույթի բնագավառում հայ-ռուսական կրթական համաժողովի բացման կապակցությամբ: Նա կարևորել է մեկ հարթակում մասնագետների հանդիպման հնարավորությունը:

«Դժվար է գերազանհատել ռուսական արվեստի և մասնագիտական կրթական համակարգի դերը երաժշտության, թատրոնի, կինոյի, կերպարվեստի բնագավառում դասավանդման չափանիշների և մեթոդների ձևավորման գործում: Երևանի կոնսերվատորիայի, Թատրոնի և կինոյի, արվեստի բուհերի ակադմիկոս մանկավարժները մշտապես ակնածանքով են խոսել իրենց ռուս ուսուցիչների մասին: Նրանք պատվով և արժանապատվությամբ են պահպանել և

թյուններից է: Նա ընթերցեց Ռուսաստանի մշակույթի նախարար Օլգա Լյուբիմովայի ուղերձը, որում ասվում էր, որ ստեղծագործական կրթության բնագավառում համագործակցության զարգացումը երկու պետությունների մշակութային փոխգործակցության կարևորագույն ուղղություններից է և:

«Ռուսաստանում ու Հայաստանում աշխարհին նվիրել են մշակույթի ակադմիկոս գործիչների, որոնց թողած հարուստ ժառանգությունը փոխանցվում է սերունդներին»՝ առաջին հերթին մեր յուրահատուկ մանկավարժների ու վարպետների ջանքերի շնորհիվ: Հենց այդ պատճառով մշակույթի ոլորտում կրթությունը մեծ դերակատարություն ունի երկու երկրների պետական քաղաքականության մեջ: Մեր մշակույթների հարստությունը, համընդհանուր պատմությունը, հարգանքը ժառանգության համդեպ, մշակութային ավանդույթները երկու կողմերի հումանիտար համագործակցության հիմնասյուներից են»,- նշվել էր ուղերձում:

Մասնակիցները քննարկել են մշակույթի ոլորտում երկու երկրների համագործակցության ընդլայնման, կրթական միջավայրի բարելավման, կադրերի վերապատրաստման, բուհերի աշխատանքում տեխնոլոգիաների ու նորարարությունների ներդրմանն առնչվող հարցեր: Համաժողովի շրջանակում տեղի են ունեցել զեկույցներ և քննարկումներ՝ մշակութային կրթության բնագավառում հայ-ռուսական համագործակցության հեռանկարների և հնարավորությունների վերաբերյալ:

Համաժողովի շրջանակում երկկողմանի համագործակցության հուշագրեր են ստորագրվել Հայաստանի և Ռուսաստանի մի քանի գիտական, կրթական ու երաժշտական ուսումնական հաստատությունների միջև: Այդ թվում պաշտոնապես տրվել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի և Նիժնի Նովգորոդի Մ. Գլինկայի անվան, Ուրալի Մ. Մուսորգսկու անվան պետական կոնսերվատորիաների հետ համագործակցության մեկնարկը: Ստորագրված համաձայնագրերը դառնալու են կրթական, մշակութային մոր հնարավորությունների սկիզբ:

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

Վոկալ երաժշտության համերգ Գյումրիում



Արտակ Այվազյան,
կոնցերտմայստեր՝ Քրիստինե Սիրմոնյան



Միջազգային մրցույթների դափնեկիր Հովհաննես
Կարապետյան, կոնցերտմայստեր՝ Ռոբիֆսինե Աղաբաբյան

1 2023-ի ապրիլի 23-ին Գյումրու տեխնոլոգիական կենտրոնի դահլիճում տեղի ունեցավ վոկալ երաժշտության համերգ: Հանդես եկան Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր, ԵՊՀ Գյումրու մասնաճյուղի վոկալ դասարանի հիմնադիր Կարինե Մկրտչյանի դասարանի սաներ Արտակ Այվազյանը, Նարեկ Բաղդասարյանը, Միքայել Սարգսյանը, միջազգային մրցույթների դափնեկիր Հովհաննես Կարապետյանը: Ծրագիրը շատ ընդգրկուն էր՝ համաշխարհային և հայ վոկալ երգացանկի հայտնի նմուշների ներառմամբ:

Ա. Սկարլատիի «Sento nel core» արիան, Ա. Դարգոմիշկու «Ночной зефир» և Ա. Սպենդիարյանի «Այ վարդ» ռոմանսները, Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայից Ֆիգարոյի արիան կատարեց Արտակ Այվազյանը: Չայնի ինքնօրինակ փայլը և վառ հնչողականությունը պատանի երգչին հնարավորություն տվեցին տպավորիչ կերպարներ կերտել:

Շ. Գունդի «Ֆաուստ» օպերայից Վալենտինի արիան, Գ. Դոնիցետիի «Ֆավորիտուհին» օպերայից Ալֆոնսի արիան, Ս. Ռախմանինովի «Вчера мы встретились» և Է. Արախանյանի «Ես երգիչ եմ» ռոմանսները կատարեց Նարեկ Բաղդասարյանը: Շատ ոգեշունչ ու ներքին հուզականության հորդումներով կատարումները միանգամից հաղորդակից դարձրին ունկնդիրին՝ բարձր գնահատելով երգչի նվիրյալ

կատարումները:

Ջ. Վերդիի «Սիմոն Բոկանեգրա» օպերայից Ֆիեսկոյի արիան, Վ. Ա. Մոցարտի «Դոն Զովաննի» օպերայից Լեպորելլոյի արիան, Ս. Ռախմանինովի «Не пой, красавица, при мне», Պ. Աֆրիկյանի «Մայր Արաքսի ափերով» ռոմանսները կատարեց Միքայել Սարգսյանը: Չայնային խիստ անհատական, բասի թանձր ու հավասար հնչողականությամբ երգիչը կերտեց համոզիչ կերպարներ՝ հատկապես օպերային դերերգերին բնորոշ հուզականության խորությամբ:

Վ. Ա. Մոցարտի «Ֆիգարոյի ամուսնությունը» օպերայից Ֆիգարոյի արիան, Վ. Ա. Վերդիի «Ազատ հրաձիգը» օպերայից Կասպարի արիան, Մ. Մուսորգսկու «Песня о блохе» և Ս. Ռախմանինովի «Христос воскрес!..» ռոմանսները կատարեց միջազգային մրցույթների դափնեկիր՝ Հովհաննես Կարապետյանը: Վերջինս կրթությունը շարունակում է արտերկրում և գյումրեցի ունկնդիրին,

որին բազմիցս հիացրել էր բազմաթիվ այլ համերգներում, ներկայացավ կայացած օպերային երգիչ-դերասանի բարձր վարպետությամբ: Ներկայից բուռն ծափողջույններին նա արձագանքեց Կոմիտասի և Ս. Ռախմանինովի ստեղծագործությունների կատարմամբ:

Երիտասարդ երգիչների բարձր պրոֆեսիոնալ կատարումներին նպաստեցին հմուտ կոնցերտմայստերներ Քրիստինե Սիրմոնյանի և Ռոբիֆսինե Աղաբաբյանի հմուտ կատարումները:

Համերգը յուրահատուկ հաղորդակցություն էր պրոֆեսոր Կարինե Մկրտչյանի վոկալ դասարանի փայլուն ավանդույթներին՝ բժախնդիր մասնագետի, զգայուն արվեստագետի և հայ վոկալ արվեստի նվիրյալի նշանակալի ծեռքերումների վերստին բացահայտմամբ:

Համերգի վերջում պրոֆեսոր Վ. Մկրտչյանը կարևորեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի հետ համատեղ ծրագրերի, վարպետության դասերի, դասարանական համերգների իրականացման անհրաժեշտությունը՝ առավել սերտացնելով Մայր բուհի և մասնաճյուղի համագործակցությունը:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու, դոցենտ



Միքայել Սարգսյան,
կոնցերտմայստեր՝ Ռոբիֆսինե
Աղաբաբյան



Նարեկ Բաղդասարյան,
կոնցերտմայստեր՝ Քրիստինե Սիրմոնյան

Սոֆա Ազնաուրյանի՝ երեխաների համար «Չիկարելիի արկածները» օպերայի երաժշտադասիարակչական նշանակությունը

Սույն հոդվածը ընթերցվել է ԵՊԿ ՈՒԳՍԸ Կոմս-տանտին Սարաքևի ծննդյան 145-ամյակին նվիրված գիտաժողովի շրջանակներում 2022-ի նոյեմբերի 30-ին ԵՊԿ Ակումստիկ լաբորատորիայում:
Ղեկավար՝ դոցենտ Մարգարիտա Բաղդասարյան



Սոֆա Ազնաուրյան

Երաժշտությունը երեխաների կյանքում ունի դաստիարակչական մեծ նշանակություն: Պատմության գրեթե բոլոր ժամանակահատվածներում՝ հայտնվել են մարդիկ, որոնք տարբեր ուսումնասիրությունների արդյունքում համոզվել են մի մտքի, որ մանկության տարիներին ձեռք բերված երաժշտական տպավորությունները կարող են երեխաների ապագայի համար մեծ հիմք դառնալ:

Ստեղծագործություններին, որոնք գրվում են երեխաների համար, բնորոշ է պարզությունը, հստակությունը, վառ պատկերայնությունը, ինչի շնորհիվ էլ մեծ տպավորություն և հետք են թողնում երեխաների գեղագիտական արժեքա-մակարգի ձևավորման վրա: Այս պատճառով էլ կարևոր է նմանատիպ ստեղծագործություններ ստեղծելիս հաշվի առնել երեխաների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները:

Ժամանակի ընթացքում կոմպոզիտորների շրջանում սկսում է լայնորեն տարածվել մանկական երաժշտություն ստեղծելու գործընթացը:

Ստեղծվեցին բազում ստեղծագործություններ, ինչպիսիք են Ռոբերտ Շումանի «Ալբոմը պատանեկության համար», Պ. Բ. Չայկովսկու՝ «Մանկական ալբոմը», Ժորժ Բիզի «Մանկական խաղեր» դաշնամուրային շարքը 4 ձեռքի համար, Կլոդ Դեբյուսիի «Փոքրիկ անկյունը», Արամ Խաչատրյանի, Էդվարդ Միքայելյանի, Յուրի Գևորգյանի և ուրիշների «Մանկական ալբոմ»-ները և այլն:

Այնուհետև կոմպոզիտորներն սկսեցին աշխատել նաև երաժշտաթատերական ժանրում, գրվեցին բազում օպերաներ, բալետներ և երաժշտաթատերական այլ ներկայացումներ երեխաների համար:

Հայկական օպերայի պատմության մեջ մանկական օպերային ժանրը մեծ կարևորություն է ունեցել և ստեղծվել են տարբեր սերունդների հայ անվանի կոմպոզիտորների կողմից:

Այս ասպարեզում մեծ հաջողություն ունեցան Վարդան Աճեմյանի «Կիկոսի մաղը», Յուրի Գևորգյանի «Խարույկը», Ստեփան Ջրբաշյանի «Գիշորը», Էդուարդ Հաջագորգյանի «Շունն ու կատուն», Էրիկ Հարությունյանի «Մի կաթիլ մեղր» և այլն:

Մանուկների համար երաժշտություն ստեղծելը մեծ տեղ գտավ նաև ժամանակակից երաժշտարվեստում, որի վառ պայծառյունը դարձան XX դարի 2-րդ կեսի և XXI դարի սկզբի հայ ժամանակակից կոմպոզիտոր Սոֆա Ազնաուրյանի ստեղծագործությունները: Նա ունի հարուստ ստեղծագործական ժառանգություն, որտեղ առանձնահատուկ տեղ ունեն մանուկների համար տարբեր ժանրերում գրված ստեղծագործությունները. խմբերգեր մանկական երգչախմբի համար, դաշնամուրային պիեսներ, մանկական երգեր և այլն:

2014-ին Ս. Ազնաուրյանն ավարտին հասցրեց նաև իր «Չիկարելիի արկածները» օպերան երեխաների համար՝ գրված հայ դրամատուրգ, ռեժիսոր և արձակագիր Ռուբեն Մարուխյանի համանուն պիես-հեքիաթի հիման վրա: Այստեղ ընդգրկված են ավելի քան 14 արկած, որոնց միջոցով հեղինակը սովորեցնում է, որ չի կարելի սուտ խոսել, շատ ուտել, նախանձել ընկերոջը, բարեկամին, բաժնեակին, խաղախաղայինը և խաբեբայությամբ զբաղվել, փչացնել բնությունը, մի խոսքով՝ անազնիվ չի կարելի լինել: Եվ, իսկա-

պես, ինչքան բան կա մեր կյանքում, որ չի կարելի անել, իսկ եթե արդեն արել ես և չես զղջում քո արարքների համար, ապա այնքան կփոքրանաս, որ քեզ այլևս ոչ ոք չի նկատի, ինչպես այս գրքի Մուշեղ անունով տղան, որը վատ արարքներ գործելու պատճառով պատժվել էր բնության կողմից, վերածվել այլանդակ մի մարդուկի և իր փրկության համար նա երկար ու դժվար ճանապարհ անցավ:

Այստեղ ընդգրկված են կարևոր դաստիարակչական նշանակություն ունեցող արկածներ, որոնց միջով անցնող Չիկարելին հանդիպում է այնպիսի արատավոր մարդկանց, որոնց մենք կարող ենք հանդիպել ամենուրեք: Դրանցից կարելի է նշել Գույնը փոխող մարդուն (քամելոն), ով տարբեր գույներ փոխելով շողոքորթում է մարդկանց, «Ծխող մարդուն», ով ցանկանում է աշխարհի բոլոր երեխաներին ծխող դարձնել և լցնել աշխարհը ծխով: Ներկայացված է նաև «Տգետ թագուհու» կերպարը, որը շատ բնորոշ է իշխանությունների ծաղրալի պատկերին: Նա, չնայած իր տգետ և հիմար լինելուն, կարողանում էր իրեն ենթարկեցնել բոլորին և կառավարել երկիրը անազնվության և տգիտության հիմքերի վրա:

Այս բոլոր պատմությունները մեծ դաստիարակչական նշանակություն ունեն երեխաների համար: Դեռ մանուկ հասակից նրանք պետք է գիտակցեն, որ նման արարքներն արատավոր են և խեղաթյուրում են մեր կյանքը:

Ամենակարևորն այն է, որ այս պատմությունն ունենում է բարի ավարտ. սա սովորեցնում է, որ ինչքան էլ սխալներ ենք թույլ տալիս մեր կյանքի ընթացքում, միշտ հնարավորություն է ընձեռնվում դրանք ուղղելու:

Ս. Ազնաուրյանի «Չիկարելիի արկածները» օպերան բաղկացած է երկու գործողությունից և վեց պատկերներից: Կոմպոզիտորը ժամանակակից երաժշտական լեզվին բնորոշ առանձնահատկություններով յուրահատուկ կերպով կարողացել է բնութագրել յուրաքանչյուր հերոսին: Մեծ նշանակություն ունի օպերայում «Աղբյուրի կերպարը», որը պատկերված է գեղատեսիլ կնոջ կերպարով, նա մարմարակերտ կին է՝ ձեռքին կուժ, որից թափվող ջուրը հոսում է երկրի ընդերքը: Աղբյուրի արիան (կոլորատուր սոպրանո) ոչ ծավալուն վոկալիզ է, նրա լայնածնան հնչյուն է օպերայի տարբեր հատվածներում՝ մշտապես տերմենվոքս գործիքի ուղեկցությամբ: Այս գործիքը գտնվում է բեմի վրա, որպեսզի տեսանելի և ուսուցողական լինի երեխաների համար և իր մոգական հնչողությամբ ունկնդրի առաջ բացում է աղբ-

յուրի իրական տեսարան:

Իր վառ և ինքնատիպ կերպարով օպերայում առանձնանում է նաև «Մուլի ծխողը» (բաս), ով ուզում է աշխարհի բոլոր երեխաներին ծխող դարձնել: Նրա արիան կատարվում է մեծ ինքնավստահությամբ, քանի որ «Մուլի ծխողը» համոզված է իր մտադրությունների իրականացման մեջ:

Կոմպոզիտորը յուրահատուկ կերպով կարողացել է ընդգծել նաև «Գույնը փոխող մարդուն» կերպարին բնորոշ առանձնահատկությունները, նրա արիան (տենոր) հարուստ է փոքր սեկունդաներով, անկայուն ինտոնացիաներով, ինչն ընդգծում է նրա՝ սողուն և քծնվող մարդկային տեսակի էությունը: Արիան հնչում է ֆագոտի և ֆլեյտայի ուղեկցությամբ, ստեղծելով հետաքրքիր երաժշտական կերպար:

Հետաքրքիր է նաև «Թագուհու կերպարը», որի դերերգը կատարում է տղամարդը՝ տենորը: Նա հանդես է գալիս որպես գրոտեսկային մի կերպար, որով կոմպոզիտորը ցանկացել է ցույց տալ իշխանության ծաղրալի պատկերը: «Թագուհու արիան» գրված է ազատ կառուցվածքով, որտեղ ծավալուն վոկալ և գործիքային հատվածները իրար են հաջորդում: Թագուհին գովաբանում է հիմարներին, ստախոսներին, ծխողներին, գողերին և քծնողներին, իսկ տգետ ժողովուրդը հետևելով իր Թագուհու հրամանին՝ պահանջում է կախել բոլոր արդար և ազնիվ մարդկանց:

Օպերայի դրամատուրգիական զարգացման զազաթնակետը դառնում է երրորդ պատկերը: Հնչում է խելագար երաժշտություն: Այն սկսվում է Թագուհու լայնթեմայով, որին միանում են «Դահիճը», «Արդարադատության նախարարը», «Ազնիվ մարդը», «Գույնը փոխող մարդը», «Մուլի ծխողը» և կազմում սեքստետ, որի ժամանակ կերպարներից յուրաքանչյուրը տանում է իր գիծը, միավորվելով մեկ ամբողջականության մեջ: Դիմանկյան աստիճանաբար ուժեղանում է, ինչն էլ ավելի է լարում իրավիճակը:

Օպերայում կարևոր նշանակություն ունեն նաև մասսայական տեսարանները. կանանց երգչախումբը, բալետային խումբը, որոնք ստեղծում են իրական և ստորգետնյա աշխարհում ապրող մարդկանց ապրելակերպի վառ և պատկերավոր մթնոլորտ:

Օպերան ունենում է լուսավոր ավարտ: Երբ մաքրվում է Աղբյուրի հունը, Չիկարելին վազում է դեպի լույսը և տեսնում, որ Աղբյուրը երգում է և ջուրը գալիս է:

Ազնաուրյանն այս օպերան առաջին անգամ ներկայացրել է Կոմպոզիտորների միության օպերային և բալետային բաժնի նիստին: Ավելի ուշ միությունը երաշխավորագրով «Չիկարելիի արկածները» ներկայացրել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն: Օպերային թատրոնի գեղարվեստական ղեկավար Գեղամ Գրիգորյանը ծանոթանալով օպերային, մեծ ոգևորությամբ որոշում է այն բեմադրել: 2015-ին սկսվում են օպերայի բեմադրման փորձերը, պատրաստվում են կերպարների հագուստների էսքիզները, դեկորացիաները, սակայն Գեղամ Գրիգորյանի մահից հետո փորձերը դադարեցվում են և օպերայի բեմադրությունն անհասկանալի պատճառներով այդպես էլ չի իրականանում:

Այսպիսով, Սոֆա Ազնաուրյանի՝ երեխաների համար «Չիկարելիի արկածները» օպերան ունի մեծ դաստիարակչական նշանակություն և այն հիմնալի օրինակ է ծանոթացնելու երեխաներին հայ ժամանակակից երաժշտական լեզվի բնորոշ առանձնահատկություններին:

ԼԼԼԼ ՍԻՍՏՈՅԱՆ

Մագիստրոսականի 2-րդ կուրսի ուսանող
խաչատուր Արուսյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Նարեկ Հովեյան. «Երգ երգույ»-ի նոր չայնը

Երիտասարդ, տաղանդավոր երգիչ Նարեկ Հովեյանը, ով անցնելով 2020-ի պատերազմի դաժան փորձությունը, Աստ-ծո օգնությամբ, կարողացավ ոչ միայն ողջ մնալ, այլ վերադառնալուց այնքան ուժեղ մարդ լինել, չկորցնելով սերը դեպի Արվեստը, շարունակել ուսումն ու հաջողությունների հասնել երգարվեստում, ելույթներ ունենալով մրցույթներում:

- Նարեկ, ինչպե՞ս եղավ, որ ընտրությունդ երգարվեստն դարձավ:

- Տատիկս նկատեց ծայրային տվյալներս: Դպրոցում օգտագործելով ունակություններս, մասնակցեցի, գրեթե, բոլոր միջոցառումներին: Երգում էի՝ ուսուցիչներս ոգևորում էին:

- Ովքե՞ր են եղել ուսուցիչներդ՝ մանկության և ովքե՞ր են հիմա:

- Կյանքի ուսուցիչս՝ մայրս է: 7 տարեկանից հաճախել



եմ Ղազարոս Սարյանի անվան արվեստի դպրոց (համրակրթական դպրոցին զուգահեռ): Ուսուցչուհիս՝ Նելլի Մարտիրոսյանն էր, ում հետ մրցանակների արժանացա: Այժմ, Երևանի Կոմիտասի անվան Կոնսերվատորիայում, ժողովրդական բաժնում սովորում եմ Մուշեղ Հարությունյանի մոտ:

-Ի՞նչ նպատակներ ունես, եթե գաղտնիք չէ:

- Նպատակս՝ դառնալ ճանաչված երգիչ, երգել

ինչպես Հայաստանում, այնպես էլ Արտերկրի մեծ բեմերում՝ տարածելով Հայկական ժողովրդական երգը:

Իսկ «Երգ երգույ. Նոր ծայներ» հաղորդաշարին մասնակցությունս, ինձ համար դռներ բացեց դեպի երաժշտարվեստի նոր ասպարեզ, ինչի համար շատ շնորհակալ եմ համընթացի վարպետներին ու իմ հանդիսատեսին բարձր գնահատականի համար:

ՎԻԿՏՈՐՅԱ ՓՈՒՇԿԻՆ
Երաժշտական թատրոնի ռեժիսոր

Ի ՀԻՇՎԱԿ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐ ԵՐԳԻ ԱՌԱՋՅԱԼՆԵՐԻ. ԼՈՒՍԻՆԵ ՉԱՔԱՐՅԱԼ ԵՎ ԽՈՐԵՆ ՊԱՆՅԱԼ

Ո՛ւշ-ո՛ւշ են գալիս, բայց ո՛չ ուշացած. Շնվում են նրանք ճիշտ ժամանակին: Եվ ժամանակից առաջ են ընկնում, Դրա համար էլ չեն ներում նրանց:

Պարույր Սևակ

1 Խորեն Պալյանն ու Լուսինե Ջաքարյանը ծնվեցին ճիշտ ժամանակին: Նրանք եկան և բերեցին այն, ինչը մենք ունեինք դարեր ի վեր, բայց նաև՝ չունեինք: Դա մեր ազգային հոգևոր երգն էր, որը ճանաչելով՝ ազգը ճանաչեց ինքն իրեն: Խորենը մեր հոգևոր ժառանգության գիտակն էր, գրաբարագետ, անգիր կարող էր արտասանել տասնյակ էջեր, գիտեր մոտ 2000 շարական, որոնցից 1700-ը երգում էր: Նրա մեջ մեր միջնադարյան վանականների ոգին էր: Իսկ Լուսինեն, որ ուներ ռուսական կրթություն, ամուսնու՝ Խորենի շնորհիվ կարողացավ մեր մշակույթի անդաստաններից վեր հանել հազարամյա գանձը՝ հոգևոր երգը ու հասցնել աշխարհի չորս ծա-

Մեթոնյանը, Լուսինե Ջաքարյանին և Խորեն Պալյանին նվիրված ինտերնետային կայքի հիմնադիր Վարդուհի Սուքիասյանը և թանգարանի հարգարժան, այլ բարեկամներ:


Թանգարանի տնօրեն Սուսաննա Դավթյանը, ողջունելով ներկաներին, ասաց.

- Հայտնի խոսք է՝ այն ինչ տալիս ես, քոն է հավիտյան: Այն, ինչ պահում ես, կորցրած է հավետ:

Խորենն ու Լուսինեն իրենց հոգու լույսը տվեցին անհատույց, տվեցին շռա՞լ: Տվեցին ոչ միայն մեր ազգին, այլև ամբողջ աշխարհին, քաղաքակիրթ մարդկությանը ցուցադրեցին ու նրա հոգուն հասցրեցին մեր հոգևոր երգերի համալիրը: Սկսած նրանք էր նրանց հերոսությունը: Եղվարդ Միրզոյանի ջանքերով Կոմպոզիտորների միության դաշիժում տեղադրվել էր երգեհոն և 1964 թ. Վահագն Ստամբուլյանը Լուսինեի ու Խորենի հետ միասին՝ այդ շենքի դաշիժում ներկայացնում էին միջնադարյան, տաղեր, շարականներ, տոհմիկ երգեր: Մարդիկ ապշահար էին մնում, զարմանում էին, որ մասն արժեքներ ունենք, բայց տեղյակ չենք:

Կուգեմ առանձնահատուկ շնորհակալություն հայտնել տնօրենին՝ մեր սիրելի տիկին Սուսաննային, ով ի հեծուկս բոլոր խոչընդոտների՝ իր անձնվեր գործն է կատարում այս չորս տարիների ընթացքում. նա կարողանում է այս փոքր տուն-թանգարանը կանգուն պահել, ծաղկեցնել, կազմակերպել տարաբնույթ միջոցառումներ՝ ներգրավելով ոչ միայն մտավորականներին, այլև ուսանողներին, առավել ևս՝ դպրոցականներին: Եվ սա շատ խրախուսելի է, գովելի և օրինակելի:

Այսպես. Լուսինե Ջաքարյան տուն-թանգարանը ամեն տարի կազմակերպում է մրցույթ-խումներ, որի ժամանակ բացահայտվում են շնորհալի ուսանողներ Երևանի երաժշտական չորս հաստատություններից՝ Կոմիտասի անվան պետական Կոնսերվատորիա, Ռոմանոս Մելիքյանի անվան պետական երաժշտական քոլեջ, Ամնո Բաբաջանյանի անվան երաժշտամանկավարժական քոլեջ, Շառլ Ազնավուրի անվան մշակույթի և արվեստի քոլեջ: Հաղթողներն արժանանում են Լուսինե Ջաքարյանի անվան անվանական կրթաթոշակին: Իսկ ԵՊՀ-ում տրվում է Խորեն Պալյանի ան-



Մարիաննա Գևորգյան



Վիլեն Հակոբյան, Սուսաննա Դավթյան



Լյուդմիլա Ջաքարյան, Իրինա Ասլանյան, Զրանուշ Հակոբյան, Վարդուհի Սուքիասյան



Րաֆֆի Պալյան, Գուգրեն Մելիքյան

գերում ապրող մեր հայրենակիցներին:

Եզնիկ Կողբացի 42/3 հասցեում, որտեղ ապրել են հայ հոգևոր երգի նվիրյալները, այսօր գործում է Լուսինե Ջաքարյան տուն-թանգարանը, որը ճիշտ կլիներ վերանվանել Խորեն Պալյան-Լուսինե Ջաքարյան տուն-թանգարան: Այսօր էլ՝ շնորհիվ թանգարանի և նրա անխոց նվիրյալ տնօրեն Սուսաննա Դավթյանի մշակութասեր հանրությունը մշտապես զգում է նրանց հոգևոր ներկայությունը:

2023 թ. փետրվարի 20-ին Երևանի Լուսինե Ջաքարյան տուն-թանգարանում նախապես տրված հայտարարության համաձայն տեղի ունեցավ հուշ-երեկո՝ նվիրված Խորեն Պալյանի և Լուսինե Ջաքարյանի հիշատակին: Ներկա էին Խորեն Պալյանի եղբորորդին՝ բժիշկ Րաֆֆի Պալյանը՝ Լուսինեյից, Լուսինե Ջաքարյանի քույրը՝ տիկին Լյուդմիլան (Լենան), նրա դուստրը՝ Իրինա Ասլանյանը, ՀՀ ԳԱԱ նախագահության անդամ, պրոֆեսոր, ակադեմիկոս՝ Վիլեն Պարույրի Հակոբյանը, «Լուսինե Ջաքարյան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ՝ արևելագետ, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը, բանասիրական գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ Արծրուն Ավագյանը, Սամվել Մուրադյանը, իրավաբան Էդիկ Ավետիսյանը, «Հայ Կանանց միջազգային միությանց» նախագահ, 2010-2018 թթ. ՀՀ Սփյուռքի նախարար Զրանուշ Հակոբյանը, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, դոցենտ Դանիել Երաժիշտը, գինեկոլոգ, հասարակական գործիչ Վահան Վարդապետյանը, «Մեսրոպ Մաշտոցի անվան լեզվի և խոսքի մշակույթի» կենտրոնի հիմնադիր-նախագահ, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Նադյա Անտոնյանը, երաժշտագետ, հրատարակիչ, «Երաժշտական Հայաստան» ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր Գոհար Շադոյանը, Կոմիտասի անվան թանգարան-ինստիտուտի տնօրեն, պետահար, արվեստագիտության թեկնածու Նիկոլայ Կոստանյանը, Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարանի տնօրեն Մարինե Օթարյանը, Հայաստանի և ՌԴ կինեմատոգրաֆիստների միությունների անդամ, ակադեմիկոս, «Ֆիլմ» ամսագրի խմբագիր Ռոբերտ Մաթոսյանը, «Բաց TV», հաղորդաշարի հեղինակ և վարող, լրագրող Համլետ Ղուշչյանը, ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Աշոտ Օհանյանը, Լուսինեի և Խորենի հարևանուհի տիկին Նելլի Ղազարյանը, Խորեն Պալյանի սան, Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի դասախոս, աստվածաբան Նելլի Պետրոսյանը, «Հայուհիների» միության նախագահ Շողանե

Խորենը մտքի հսկա էր. հրաշալի գիտեր հայ բանահյուսություն, հայոց պատմություն, միջնադարյան հոգևոր երաժշտություն. 1700 շարական բերանացի, անգիր գիտեր: Ինչպես ինքն էր պատմում՝ «...Էջմիածնի Գևորգյան ծեմարանում ուսանելիս, առավոտյան ժամը հինգին էի արթնանում և վանքի պատերի տակով քայլելով՝ սերտում էի դասերս, մինչև մյուս սաները կարթնանան»: Սկսած ինչու էլույթ ունենալիս նա երբևէ չօգտվեց տեքստից, տիրապետում էր հռետորական արվեստին հիմնալիորեն: Խորենը ահավոր աշխատասեր էր, պարտաճանաչ, համրագիտաբանային մտքի տեր անձնավորություն էր՝ հունորի հսկայական պաշարով:

Թանգարանի տնօրենը զարմանալի անկաշկանդ, անբռնազբոս կերպով մեկ առ մեկ ներկայացրեց մասնակիցներից յուրաքանչյուրին՝ ընդգծելով նրանց զնախադանքի արժանի գործունեությունն ու մարդկային ելությունը: Իր և բոլորի կողմից գոհունակություն հայտնեց Րաֆֆի Պալյանին Լուսինեի և Խորենի երազանքն իրականություն դարձնելու համար:

Այնուհետև թանգարանի տնօրենը ծայրը փոխանցեց բժիշկ Րաֆֆի Պալյանին.

-Խորեն Պալյան և Լուսինե Ջաքարյան: Հայ ազգի երկու մեծեր, որոնք իրենց գիտակցական կյանքը նվիրեցին այն երկրին, որում անուն է Հայաստան: Իրենց որպես միասնական, ամբողջական ուժ՝ կարողացան գործունեություն ծավալել և իրենց ներդրումը կարծեք փոքր վերածնունդ դարձավ հայ հոգևոր երաժշտության, միջնադարյան տաղերի: Լուսինեն աստվածատուր ծայր ուներ: Երբ կերգեր, կարծես կաղթեր: Ավա՛ղ, Լուսինեն շուտ մեկնեցավ, անավարտ մնաց իր գործը:

Խորեն Պալյան՝ դարձյալ մեծ հայ, երևույթ էր պատմության մեջ, դասախոս: Նրանց բազմաթիվ գործեր մնացին անավարտ: Եվ այդ անավարտ գործերից մեկն էլ թանգարանի ստեղծումն էր, որ Խորեն Պալյանը չհասցրեց իրագործել իր կյանքի օրոք: Աննկարագրելի դժվարությունների արդյունքում մենք իրականություն դարձրեցինք Խորեն Պալյանի երազանքը. հունիսի 1-ին այս թանգարանը կբոլորի իր չորս տարին: Թանգարանի նպատակն է հիմնադրամի միջոցով օգնել այն պատանիներին, ովքեր խոստումնալից ապագա ունեն:

Ինչպես իրավագիտորեն նշում են բոլոր այցելուները, այսօր այս թանգարանը դարձել է վերնատուն՝ կայացած, լուրջ, ազնիվ մտավորականների հավաքատեղի:

վան անվանական կրթաթոշակ: Այսօր այդ պատվին արժանացած ուսանողներից Ալբերտը, Անահիտը և Ալիսան կատարեցին միջնադարյան տաղեր և արժանացան ներկաների բարձր գնահատականին:

Թանգարանի տնօրենի հատուկ հրավերով ներկաների համար իր գեղեցիկ կատարումով ելույթ ունեցավ նաև քանոնահարուհի, բազմաթիվ միջազգային մրցույթ-փառատոների դափնեկիր, ոսկե մեդալակիր Մարիաննա Գևորգյանը: Նա հանդես եկավ Մայաթ-Նովայի տաղերից մեկի հիմնական կատարմամբ՝ գեղագիտական հաճույք պատճառելով ներկաներին:

Ունագրավ էր Մեսրոպ Մաշտոց անվան լեզվի և խոսքի մշակույթի կենտրոնի նախագահ Նադյա Անտոնյանի խոսքը.

- Ես մեկն եմ այն երջանիկ սերունդից, որը ցմահ բախտավորվեց Լուսինեի և Խորենի մոտիկից ծանաչելու, նրանց կենդանի սրբախորհուրդ երգարվեստը մոտիկից ծանաչելու և վայելելու բացառիկ հնարավորության համար: Նրանց բարձրարվեստ կատարումները վեհացնում էին մեզ՝ խորհրդային երիտասարդներին հոգիները և մեր մեջ ձևավորում ազգային ինքնության զգացողություն և գիտակցություն: Նրանց երգարվեստը սերունդների համար դարձավ բարձր ծաշակի, հայեցի դաստիարակության և կրթության յուրահատուկ կաճառ: Իրենց աստվածատուր առաքելությամբ նրանք ստեղծեցին մեծ մշակույթ, որով հիացանք, հարստացանք մենք՝ ժամանակակիցներս և հետո եկող սերունդները: Նրանց արվեստով սքանչացան ու հարստացան հայն ու Հայաստանը: Ժամանակի հրամայականն էր Լուսինեի ու Խորենի մեծ մշակույթը փոխանցել սերունդներին:

Եվ ահա տեղին ու ժամանակին ծնվեց Լուսինե Ջաքարյան տուն-թանգարանը, որը բացառիկ նվիրումով է իրականացնում Լուսինե Ջաքարյանի և Խորեն Պալյանի աստվածահաճ երգարվեստը սերունդներին փոխանցելու առաքելությունը: Հարգանք ու պատիվ տուն-թանգարանին:

Եվ ծանաչողի իրավունքով ուզում եմ հավաստել, որ Լուսինե Ջաքարյան տուն-թանգարանը գտել է իր ազնվաշուք տիրուհուն և ողջակեզ մշակին՝ բոլորանվեր Սուսաննա Դավթյանին, որ անմնացորդ ինքնայրումով շնչավորում, հանրայնացնում և սերունդներին է փոխանցում Լուսինեի ու Խորենի կենարար երգարվեստը:

Հիշատակման է արժանի մեծարգո ակադեմիկոս Վիլեն Հակոբյանի խոսքը.

- Շնորհակալություն եմ հայտնում Րաֆֆի

Ի ՀԻՇՎՏԱԿ ՀԱՅ ՀՈԳԵԿՈՐ ԵՐԳԻ ԱՌԱՋՅԱԼՆԵՐԻ. ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆ ԵՎ ԽՈՐԵՆ ՊԱՆՅԱՆ

4 Պալյանին՝ թանգարան ստեղծողին, թանգարանի տնօրեն, ամիսոջ նվիրյալ տիկին Սուսաննա Դավթյանին, որ անմնացորդ, հոգով նվիրվել է այս թանգարանին: Ես Րաֆֆին գիտեմ ուսանող տարիներից, իր դեկամն եմ եղել: Բայց այն ժամանակ չգիտեի, որ կապված է մեր հորեն Պալյանի հետ: Ապրեք, որ այս մեծ գործը կյանքի եք կոչել:

Ես Լուսինեի ծայրն առաջին անգամ եկեղեցում եմ լսել՝ 1967 թվականին, երբ նա կատարում էր «Սուրբ Սուրբ»-ը: Ես այդ կատարումը մինչև հիմա չեմ մոռանում: Լուսինեի ծայրագույնությունները ես մինչև հիմա ունեմ և եկեղեցական տոների ժամանակ ամբողջ օրը դա եմ ըմբռնում, որովհետև Լուսինեի ծայրը լսելիս ինձ թվում է՝ ես մոտենում եմ Աստծուն:

Հուլ-երեկոյի մասնակիցներից շատերն են բարեբախտություն ունեցել շփվելու Լուսինեի ու հորենի հետ: Նրանցից է արևելագետ, պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանը.

- Իմ կյանքի ամենաերջանիկ օրն է եղել հորենի հետ ծանոթանալը:

- Համալսարանում,- արձագանքում են ներկաները:

- Ոչ: Էջմիածնում: Գնացել էինք Էջմիածին՝ ես և Սեյրան Ամիրյանը: Խորենին բերեցին երգելու. դա դարձավ շրջադարձային: Մեր շատ սիրելի հորենը դարձավ համալսարանի ուսանող և հետո երկար ու ծիգ տարիներ ընկերություն արեցինք: Գիտեք, թե 1960-ական թվականներին եկեղեցիների վիճակն ինչպիսին էր: Խորենն առաջիններից էր, որ սկսեց մաքրել եկեղեցիների շրջակայքը, խաչքարերը: Նա խնկարկում էր եկեղեցիները: Մեր բողոքի հիման վրա մեզ գործուղեցին Հայաստանի տարբեր շրջաններ, որ ուսումնասիրենք, թե եկեղեցիներն ինչպիսին են: Հավատացնում եմ ձեզ, մեր բողոքի ծայրը տեղ էր հասել: Խորենն այն ընկերներից էր, այն պայքարող հայն էր, որ Լուսակերտի դամբարանները կարողացավ փրկել: Որովհետև Լուսակերտի դամբարանները քանդում ու սարքում էին ամռանոցներ: Եվ այն հատվածը, որ փրկվել է, հորենի՝ շնորհիվ է: Խորենը պայքարող տեսակ էր...

Խորեն Պալյանը մտավորականների հիշողության մեջ հենց այդպիսին էլ մնացել՝ պայքարող տեսակ: Եվ գինեկոլոգ Վահան Վարդապետյանը, որ մշակութասեր, արվեստի մարդկանց հետ սերտ առնչություններ ունեցող անձնավորություն է, միջամտում է Գուրգեն Մելիքյանի խոսքին և ասում, որ «հենց պրոֆեսորի ջանքերի շնորհիվ հնարավոր



Գուրգեն Մելիքյան, Գոհար Շազոյան, տիկին Լյուդմիլա Զաքարյանի թոռնուհին և դուստրը՝ Իրինա Ասլանյան Լուսինե Զաքարյանի և հորեն Պալյանի տուն թանգարանում

եղավ պատշաճ կազմակերպել հորեն Պալյանի հրաժեշտի արարողությունը: Թվում է՝ բոլոր ժամանակների ըմբոստ ու քաղաքական այլախոհ մտավորականը պետք է մոռացվեր պետության կողմից: Բայց եղավ հակառակը»:

Պրոֆեսորը շարունակում է.

- Երբ նախագահ Սերժ Սարգսյանն իմացավ, որ մահացել է հորեն Պալյանը, և ես զբաղված եմ հրաժեշտի արարողությունները կազմակերպելու հարցերով, ասաց.

- Ինչո՞ւ ինձ տեղյակ չես պահել:

- Խորենն ընդդիմադիրների շարքում էր:

Այլևս չթողեց շարունակել ու պատասխանեց.

- Խորենն իմ ուսուցիչն է եղել...

Եվ այդպիսով պետության ֆինանսական աջակցությամբ հնարավոր եղավ կազմակերպել հորենի հուղարկավորությունը Էջմիածնի Սուրբ Գայանե եկեղեցու բակում:

Գուրգեն Մելիքյանը չմոռացավ շնորհակալություն հայտնել Րաֆֆի Պալյանին՝ թանգարանը բացելու և Սու-

սաննա Դավթյանին՝ այն ծաղկեցնելու համար:

Երեկոն անցավ շատ անկեղծ, ջերմ մթնոլորտում: Դրան նպաստեց Սուսաննա Դավթյանի՝ միջոցառումն այդքան յուրօրինակ, անսովոր, ազատ ու սահուն վարելու ոճը, որը շատ-շատերին մղեց անկեղծ խոսելու, թանկ հուշերով կիսվելու:

Շատերը նույնիսկ պատրաստված էին եկել: Սակայն որոշվեց, որ նրանք իրենց խոսքը կասեն մարտի 10-ին՝ հորեն Պալյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառմանը:

Թանգարանում թևածում էր համերաշխությունը, միասնությունը, ներդաշնակությունը, Սերը: Երանի թե, այս սուրբ օջախի անմահ մթնոլորտը տեղափոխվի մեր կյանքի մյուս օջախները, հաստատությունները...

Երեկոյի ավարտին տեղի ունեցավ հյուրասիրություն:

ՀԱՍՄԻԿ ՊՈՐՈՍՅԱՆ Լրագրող, թանգարանի աշխատակից

Պրոֆեսոր Ծովինար Հովհաննիսյանի դասարանական համերգը

1 2023-ի մարտի 24-ին, «Նարեկացի» արվեստի միությունում տեղի ունեցավ ԵՊԿ Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի քանոնի դասարանի դասարանական համերգը՝ «Գնացքում» խորագրով, դասախոս՝ ՀՀ վաստակավոր մանկավարժ, պրոֆեսոր Ծովինար Հովհաննիսյան, օգնական՝ Գայանե Աբաջյան, նվագակցողներ՝ Աղավնի Հովհաննիսյան, Արմեն Աղաջանյան:

Ծ. Հովհաննիսյանի ուսանողների համերգային ելույթները թե՛ Հայաստանում, թե՛ արտասահմանյան համաժամանաչ դաիլիճներում դարձել է մասնագիտական դասարանի ավանդույթը: Չնայած նրան, որ ուսանողները բազմիցս հանդես են գալիս մենահամերգներով, դասարանական համերգները պրոֆեսոր Ծ. Հովհաննիսյանի դասարանում բարի ավանդույթ են: Այժմ դասարանում սովորում է 22 քանոնահար, ինչը քանոնի դասարանի պատմության բացառիկ դեպքերից է, երբ միաժամանակ նույն դասարանում սովորում է 22 ուսանող, ովքեր բոլորն էլ ելույթ ունեցան համերգի ընթացքում: Համերգի սկզբում հնչեց հոգևոր ստեղծագործություն՝ Կոմիտաս Բեշիշյանի «Ռեքվիեմ»-ը, որի ժամանակ իրենց մասնակցությունը ցուցաբերեցին դասարանի բոլոր քանոնահարները: Այնուհետև իր ողջույնի խոսքն ասաց և համերգի մեկնարկն ազդարարեց դասարանի առաջատար քանոնահարուհիներից Անահիտ Հարությունյանը, ով նաև վարեց համերգը: Հոգևոր ստեղծագործությունից հետո հնչեց Արգաս Ոսկանյանի թառի Կոնցերտը՝ Ծ. Հովհաննիսյանի փոխադրմամբ քանոնի համար, որի ժամանակ քանոնահարների կազմը կրճատվեց: Այնուհետև համերգի ընթացքում կատարողների կազմը բազմիցս փոփոխության ենթարկվեց՝ մենակատարներ, դուետներ, տրիոներ, կվարտետներ, կվինտետներ և այլն: Պետք է հավելել, որ հնչել են և՛ հանդիսատեսի ակամջին ծանոթ, և՛ ոչ այնքան ծանոթ ստեղծագործություններ:

Քանոնահարների նպատակներից էր կատարողական նոր մոտեցումներ ներկայացնել և նորովի մատուցել գործիքը: Նվագացանկը բազմաժամր էր, բաղկացած էր հոգևոր և աշխարհիկ, մեծ ու փոքր կտավի ստեղծագործություններից: Նվագացանկը բաղկացած էր հայ կոմպոզիտորական դպրոցի ներկայացուցիչների գրչին պատկանող ստեղծագործություններից՝ գրված քանոնի համար, ինչպես նաև փոխադրումներից և մշակումներից: Համերգի ընթացքում տեղի ունեցավ բեմելն. առաջին անգամ հնչեց Ծ. Հովհան-



Ծովինար Հովհաննիսյանի քանոնի դասարանը, Նարեկացի արվեստի միությունում Նարեկ Հարությունյանի խոսքը

նիսյանի կազմած «Ռոմանոս Մելիքյան: 13 երգ» գրքից «Աշուն երգ» փոխադրումը: Հնչեցին նաև երիտասարդ կոմպոզիտոր Մ. Սամվելյանի «Առավոտ» ստեղծագործությունը, Ն. Գրիգորյանի քանոնի «Կոնցերտ»-ը, Կոմիտաս Վարդապետի «Մշո շորոր», Ա. Վալեսյանի «Էքսպրոնտ», Ա. Բաբաջանյանի «Վերադարձում ինձ երաժշտությունը» երգը և այլն:

Առաջին անգամ հնչեց նաև Խ. Ավետիսյանի «Գնացքում» ստեղծագործությունը, որը մինչ այդ չէր կատարվել: Բարձրարվեստ կատարումներն ապահովեցին համերգի զեղեցիկ ընթացքը: Համերգի վերջում իր հիացմունքի խոսքն արտահայտեց «Նարեկացի» արվեստի միության հիմնադիր նախագահ Նարեկ Հարությունյանը և գրքույկներ նվիրեց բոլոր քանոնահարներին: Համերգը հետաքրքրություն էր առաջացրել երաժշտասերների շրջանում: Ներկա էին ԵՊԿ դասախոսներ, արտասահմանից ժամանած հյուրեր, Արմավիրի գորամասի սպայական կազմը, որը մեծ սիրով և ոգևորությամբ հրավիրեց քանոնահարուհիներին իրենց գորամաս՝ համերգային ելույթի: Համերգին ներկա էին նաև մանկահասակ երեխաներ, որոնք ուշադրությամբ և հետաքրքրությամբ ունկնդրեցին համերգի ամբողջ ծրագիրը:

Քանոնի ազդեցիկ հետաքրքրությունը և սերն օր օրի ավելի է մեծանում, այդ գործում հսկայական ներդրում ունի



Ծ. Հովհաննիսյանը, ով ջանք չի խնայում իր գիտելիքները գալիք սերնդին փոխանցելու, ոգևորում է երիտասարդ ստեղծագործողներին և կատարողներին՝ հետապնդելով մեկ նպատակ, քանոնը յուրովի բացահայտել և տարածել: Այս ամենի վառ ապացույցը դասարանական, և առհասարակ, քանոնահարների բոլոր համերգների լեփ-լեցուն դաիլիճներն են:

«Գնացքում» խորագիրը պատահական ընտրություն չէր, բացի այն, որ համերգի վերջում հնչել է Խ. Ավետիսյանի համանուն ստեղծագործությունը, զնացքը խորհրդանշում է կյանքի ընթացքը՝ իր արագությամբ, փորձություններով և հետաքրքրությամբ, որի ուղևորներն ենք մենք՝ բոլորս: Մենք արվեստի անասահմանության մեջ ենք փնտրում կայարաններ, որտեղ կարող ենք կանգ առնել և արարել:

Ամփոփելով համերգը՝ պետք է նշել, որ այն հաջողությամբ կայացավ, և համերգի վերջում հնչեցին հանդիսատեսի հիացական խոսքերը: Քանոնի այսչափ ճանաչումը և սերը բոլորիս նվաճումն է:

ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ ԵՊԿ Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի բակալավրականի 2-րդ կուրսի ուսանող

Աշխարհի բններում զապի ապնականը՝ Գարի Քյոսայանը պատմում է Հայի մասին

1 Ամեն հայ արվեստագետի ստեղծած մշակութային արժեքը մնայուն է դառնում, երբ աշխարհի ժողովուրդների ընտանիքում իր ազգի գույնն է բերում: Այսպես է ծնունդ առնում նաև կոմպոզիտոր Գարի Քյոսայանի երաժշտությունը: Իսկ երբ արվեստագետը կոմպոզիտոր է ու միաժամանակ նաև՝ նկարիչ, ապա նա իր ազգին ու աշխարհին ընծայում է ոգեղեն երաժշտություն, որի հնչյուններն աշխարհի բններում վերածվում են իսկական «կտավների»՝ պատմելով, որ եղել է ու կա մի ազգ, որ X դարում Գրիգոր Նարեկացի է ծնել, ում այսօր նույն եվրոպացի հայազետներն անվանում են երրորդ հազարամյակի մեծագույն մտածող:

Ջազմեն Գարի Քյոսայանի, ինչպես իրեն են անվանում՝ «ջազի ազնվականի», երաժշտությունն օտար ժողովուրդների համար հենց այդ հոգու ճանապարհներից մեկն է՝ հաղորդակցվելու հայ մշակույթի ու նրա հնամենի ակունքների հետ: Եվ Գարի Քյոսայանի յուրաքանչյուր համերգը, իսկապես, նման է հրաշքի արարման, երբ օտար հանդիսատեսը նրա երաժշտության և կատարումների մեջ տեսնում է Մաշտոցին, Նարեկացուն, Շնորհալուն, Կոմիտասին, մեր անցյալի հերոսական մաքառումները: Իսկ երբ դահլիճում հայ հանդիսատեսն է, ապա համերգի ավարտից հետո վերադառնում է իր ակունքները վերագտած, թե ինչպես պետք է քայլենք ժամանակակից աշխարհում ու ինչպես պետք է ապահովենք մեր մշակույթի հարատևությունը:

Ապրիլի 15-ին «Արամ Խաչատրյան» ֆիլհարմոնիկի համերգասրահում ջազմեն երաժիշտ Գարի Քյոսայանը հանդես եկավ համերգով: Չենց այդ օրը լույս էր տեսել մաեստրոյի մոր՝ «Արմենիա» ծայնասկավառակը, որն ընդգրկում է յոթ ստեղծագործություն, որոնք շարունակելու են աշխարհին պատմել մեր հնամենի ազգի մասին, որի պատմության սկիզբը կորչում է հազարամյակի խորքում:

Մաեստրոյի երաժշտությունը հայ արվեստագետի գրույցն է իր ժողովրդի և աշխարհի հետ, որը լսելով ինքը էլ են գրույցի բռնվում մեր մեծ նախնիների ու անցյալի հանճարների հետ: Եվ համոզվում, որ ինչպիսին էլ լինի մարդկության պատմության հետագա ընթացքը, մենք պարտավոր ենք մեր արժեքներից կաշած՝ հարատևել... և ինքներս պիտի դառնանք առաջամարտիկ՝ աշխատում համամարդկային արժեքներ տարածելու, ինչպիսին եղել ենք պատմական հին ժամանակներում: Եվ մաեստրոն սրանով իր ժողովրդին ու աշխարհին ուզում է կրկնել Չամո Սահյանի տողերը.

Մի հեռավոր, անհայտ մոլորակից կգամ,
Կգամ ու թափ կտամ
Չարդագողի փոշին շենքիդ վրա...

Գարի Քյոսայանի այս՝ հերթական համերգը նշանավորվեց նաև հենց “Armenia” ծայնասկավառակի շնորհանդեսով: Իսկ անվանումը ծնվել է համանուն ստեղծագործությունից. հենց այդ «բաբախող սիրտն» է, որի զարկը մարդկությանը հիշեցնելու է, որ այստեղ՝ Հայկական Բարձրա-

կությանը հղել է Ընտանիքը որպես արժեք ամուր պահելու գաղափարը: Կարո՞ղ ենք ասել, որ նախնյաց ավանդած արժեքները պահելով է, որ պիտի ամուր լինի նաև Հայոց Կենաց ծառի արմատը: Կարծում են՝ կարող ենք: Եվ, կարծում ենք, պատահական չէր, որ հաջորդ ստեղծագործությունը կոչվում էր «Ծիրանի ծառ»...

«Ավել Մարիա» ստեղծագործությունը նման է աղոթքի: Այն հնչեց անվանի օպերային երգչուհի Իրինա Ջաքյանի անգուղական կատարմամբ: Ու հայ արվեստագետի հոգին միշտ լի է լավատեսությամբ, որ, այո՛, ապրելու է Հայոց աշխարհը: Եվ մեր երկրի համար այս դժվարին ժամանակներում ապրեցնող ուժ է Գարի Քյոսայանի «Լույս» ստեղծագործությունը, որը հնչեց առաջին անգամ: Սա, ասես, ծոն է ապագային՝ Հայի ապագային, որ դեռ պիտի վերականգնի իր բաժին արդարությունը: Լսում են: Եվ հնարավոր չէ չմտաբերել մեծն Թումանյանի՝ տողերը.

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՛ր-հազա՛ր լուսապայծառ հոգիներով ծառա-գած...

Հավատում ենք, որովհետև բնում են «Արևիկ» համույթի շնորհալի փոքրիկները: Եվ շատ մեծ խորհուրդ ունի, որ մանկան շուրթերով հնչում է «Երկիր անառիկ» ստեղծագործությունը:

Հետո մաեստրո Գարի Քյոսայանի «Ծիր Կաթին» ստեղծագործության հնչյունները զալիս են ավելի ամրացնելու հավատը, որ հազարավոր տարիներ առաջ Տիեզերքի հետ զույգ արած ազգը, այո՛, հարատևելու է ու շարունակելու է աշխարհին պատմել իր մասին: Շատ համահունչ ավարտ է հանդիսանում «Հոգեվիճակ» ստեղծագործությունը՝ լի մտորումներով ու զգացմունքներով: Եվ ամբողջ ընթացքում յուրաքանչյուր ստեղծագործություն շունչ ու ոգի էր ստանում մաեստրոյի ու «Ջազ քառյակի» անգուղական կատարումներով:

Համերգի երկրորդ բաժինը սկսվում է Գարի Քյոսայանի «Լուռություն» և «Հրեշտակների պար» ստեղծագործություններով: Հետո երգչուհի Ալլա Սահակյանն իր արտիստական գեղեցիկ կատարումներով մոր գույն ու երանգ է բերում Գարի Քյոսայանի «Երեկվա սեր», «Ամձրևի արցունքներ» ստեղծագործություններով: Նա կատարեց նաև Օսվալդո Ֆերիեսի հայտնի «Գուցե, գուցե, գուցե» երգը...

Գարի Քյոսայանի «Արմենիա» ստեղծագործությունը ամբողջացրեց համերգի ամբողջ ոգին՝ խորհրդանշելով նաև համանուն ծայնասկավառակի ծնունդը: Իսկ եզրափակիչ ակորդը հանդիսացավ «Էդդի» ստեղծագործությունը:

«Մի մեծ երազանք ունեմ, որ ամեն հայ հասկանա, թե ինքն ով է, որտեղ է ապրում՝ որպես առաջին քրիստոնյա ժողովուրդ»

Համերգի նախօրեին բացառիկ առիթ էի ունեցել գրուցելու Մաեստրոյի հետ, և նա սիրով ինձ հետ կիսել էր իր խորհրդ մեր ազգային արժեքների, ջազի մասին: Ներկայացնում են հարցազրույցը.

ցիմը աշխատել սկավառակի թողարկման ուղղությամբ: Եվ այս տարի վերջապես, լույս տեսավ ծայնասկավառակը՝ «Արմենիա» խորագրով: Ընդգրկվել են յոթ գործեր՝ «Ծիր Կաթին», «Վալս Մարիայի համար», «Արմենիա», «Ռոմանս», «Մաքուր օդ», «Երեկոյան սերենադ», «Առավոտ»:

- Ամերիկացի հանրահայտ ջազմեններն ի՞նչ աշխարհ են բացահայտում իրենց համար՝ շփվելով Ձեր արվեստի հետ և Ձեր միջոցով բացահայտելով հայ ազգին:

-Հայ ազգին ոչ թե բացահայտում են, այլ գնահատում են շատ բարձր: Կա մարդկային և հոգևոր բարձր մակարդակի վրա գտնվող ունկնդիր: Ես իմ ստեղծագործական կյանքի ընթացքում շատ հռչակավոր երաժիշտների հետ եմ աշխատել, շատերին հրավիրել եմ Հայաստան՝ ինձ հետ ելույթ ունենալու: Նրանք պարզապես հիացած են հայ ժողովրդի բարիկամեցողությամբ, մեր մշակույթով, մեր հոգևոր արժեքներով: Մեր երկրում մի անբացատրելի էներգետիկա կա, որ աներևույթ ձևով ազդում է երաժիշտների հոգևոր աշխարհի և, ինչ խոսք, կատարողական արվեստի վրա: Եվ դա անբացատրելի է:

-Հարգելի Մաեստրո, այս առթիվ ականա հիշեցի համաշխարհային կինոյի լեգենդ Տոնինո Գուերային, ով իր հերթին մեծ կապեր ուներ Հայաստանի հետ, հատկապես Սերգեյ Փարաջանովի: Տարիներ առաջ Երևանում հյուրընկալված ժամանակ ասել էր այսպիսի հետաքրքիր միտք՝ համեմարին բնորոշ. «Իմ տունը Հայաստանում գտնվում է այնքան բարձր, որ լսում եմ Աստծո հազը»: Տուն ասելով՝ նկատի է ունեցել զուցե հենց հոգու՝ տաճարը: Ձեր արվեստակից ընկերների շրջանում եղե՞լ են այսպիսի ուշագրավ դիտարկումներ Հայաստանի հետ կապված:

- Իհարկե: Շատ են եղել: Կար մի աշխարհահռչակ բաս-կիթառահար՝ Մայքլ Սոուսեր: Մի անգամ նա ինձ ասաց.

- Ես ապշած եմ: Առաջին անգամն եմ տեսնում այսպիսի երկիր: Երբ վերադառնամ, ոչ ոքի չեմ ասելու, որ այսպիսի երկիր գոյություն ունի:

Ջարմացա: Ասացի.

- Ինչո՞ւ:

Ասում է.

-Որ չգամ ու չփչացնեն այս երկիրը:

Անշուշտ, դուք գիտեք նաև Բայրոնի խոսքերը հայերի ու Հայաստանի մասին: «Երկրագնդի երեսին չկա այլ երկիր, որն այսքան հագեցած լինի հրաշքներով, ինչպես հայերի երկիրն է»: Մի մեծ երազանք ունեմ, որ ամեն հայ հասկանա, թե ինքն ով է, որտեղ է ապրում՝ որպես առաջին քրիստոնյա ժողովուրդ, ազգ ինչպիսի քաղաքակրթություն ունի թիկունքին: Երազում եմ, որ մենք կարողանանք այսօր մեր մեջ ուժ գտնել, ոտքի կանգնել մեր այսքան ծանր կորուստներից հետո և պահպանել մեր այս հոգևոր-մշակութային հզոր ժառանգությունը:

-Հարգելի Մաեստրո, դուք հենց մեր այդ հոգևոր-մշակութային ժառանգությունից սնվող արվեստագետ եք: Եվ դրա կնիքը կա Ձեր բոլոր ստեղծագործություններում, որոնք այսօր իրենց տեղն ունեն համաշխարհային ջազում: Կուզենամ Ձեր խոսքն ասեք այն մասին, թե այսօր ինչպիսի



«Արևիկ» համույթ



Ալլա Սահակյան և «Ջազ քառյակ»



Իրինա Ջաքյան և Գարի Քյոսայան

վանդակում է գտնվում աշխարհի հնագույն քաղաքակրթության ակունքներից մեկը:

Միայն ստեղծագործությունները, որ տեղ են գտել ծայնասկավառակում. “Milky Way”, “Waltz for Maria”, “Armenia”, “Romance”, “Fresh Air”, “Evening Serenade”, “Morning”: Եվ այս ստեղծագործությունները ծայնագրվել են դեռ 2016-ին՝ աշխարհահռչակ ջազմենների կատարմամբ. Լուիս Վան Թեյլոր (սաքսոֆոն), Հենրի Ֆրանկլին (կոնտրաբաս), Վիլլի Ջոնս (հարվածային) և Գարի Քյոսայան (դաշնամուր): Չայնագրությունը կատարվել է այն ժամանակ, երբ Մաեստրոն իրականացրել էր միջազգային մեծ նախագիծ՝ «Ջազմ ընդդեմ ցեղասպանության» սա արվեստի միջոցով պայքար էր մարդկությանն ուղղված հանցագործությունների ու ցեղասպանությունների դեմ:

Համերգի առաջին բաժինը բացվում է «Կիրկոսյա բլյուզ» ստեղծագործությամբ, որն, ասես, ծոն է մեր քաղաքին, այստեղ ապրած մարդկանց: Այս ստեղծագործությունը երևանի գույներն են: Հետո «Վալս Մարիայի համար» ստեղծագործությունն է, որը արվեստագետը նվիրել է իր դստերը: Եվ այս լուսավոր ստեղծագործությունը ոչ միայն կոմպոզիտորի կյանքի երջանիկ դրվագի մասին է, այլև ասես, մարդ-

- Մաեստրո, գիտեմք, որ «Արմենիա» սկավառակը թողարկելու հատ կապված աշխատանքները սկսվել էին դեռ 2016-ից և տևեց ուղիղ յոթ տարի: Կուզեի խոսեք այս մասին:

- 2եք պատկերացնի, թե ինչքան դժվարություններ հաղթահարեցիք մինչև հասցրեցիք թողարկել, որքան ծանր աշխատանք էր: Չայնասկավառակի ծնունդը տևեց յոթ տարի: Դեռ 2016-ին ԱՄՆ-ից եկել էին ընկերներս, ովքեր աշխարհում ջազի հսկաներ են և մասնակցում էին «Ջազմ ընդդեմ ցեղասպանության» համերգին: Հրավիրված էին շատ հայտնի երաժիշտներ՝ սաքսոֆոնահար Լուիս Վան Թեյլորը, կոնտրաբասահար Հենրի Ֆրանկլինը և հարվածային գործիքներից Վիլլի Ջոնսը: Մենք այդ ժամանակ ունեցանք և՛ համերգ և՛ ծայնագրություն: Այդ ծայնագրությունները մնացել էին, որովհետև ես զբաղված էի համեզային գործունեությամբ, ներկայացման համար երաժշտություն գրելով: Եվ անընդհատ ձգձգվում էր: Բայց, ինչ խոսք, զուգահեռ աշխատում էի նաև մեկ այլ ծայնասկավառակի նախապատրաստական աշխատանքների վրա: Աշխատում էի նաև ստեղծագործությունների ընտրության վրա, թե ո՞ր գործերը պետք է տեղ գտնեն: Վերջապես, անցյալ տարի արդեն սկսե-

խզված կապ եք տեսնում այսօրվա հայ մարդու և իր անցյալի միջև:

-Խոսքս դրա մասին էր, որ ազգը պիտի հասկանա, թե ինքն ով է, որտեղից են գալիս իր ակունքները և ուր է գնում: Եվ այն հսկայական զանձը, որ հայ ազգը տվել է համաշխարհային գիտության ու արվեստի ասպարեզներում, զարմանալի և անընդգրկելի է: Չափազանց մեծ է եղել հայ ազգի լուսման համաշխարհային մշակույթի զանձարանում: Նկարիչ Այվազովսկին, կոմպոզիտոր Խաչատրյանը, եկմալյանը, Ազնավուրը, Միշել Լեգրանը, գրողներից՝ Վիլիամ Սարոյանը... էլ չեմ ասում՝ հանճարների հանճար՝ Նաեկացին: Աշխարհում միակ հանճարն է, որ չի խոսել Աստծո մասին, այլ խոսել է Աստծո հետ : Հիշում ենք չէ՞ Նարեկացու «Մատյանի» անվանումը՝ «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստծո»: Այսպիսի հոգու և հզորագույն մտքի ժայթքում չեք գտնի համաշխարհային գրականության մեջ: Էլ չեմ ասում՝ Նաեկացու տաղերը:

-Եվ այս առումով ուզում եմ հիշեմ այսպիսի մի փաստ: Մի քանի տարի առաջ Ֆրանսուա Երաժշտագետի հոդված կարդացի, որտեղ ասում էր, որ Բալիս ֆուգաների տաղաչափությունը եվ-

ՎՍՏԱՆԻ ԲԱՅՆԵՐ ԴԵՊՈԻ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԱՇԽԱՐՀ

Ապրիլի 19-ին «Առնո Բաբաջանյան» համերգասրահում Դավիթ Մարուխյանի ղեկավարությամբ տեղի ունեցավ Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի «Չայկովսկի կամերային նվագախմբի» համերգը:

Չայկովսկի Կամերային նվագախումբը երիտասարդ կուլեկտիվ է: Այն հիմնադրվել է 2019-ին երիտասարդ դիրիժոր, իր մասնագիտության մեծ նվիրյալ Դավիթ Մարուխյանի նախաձեռնությամբ: Նվագախմբում ընդգրկված են հիմնականում 13-ից 17 տարեկան պատանի երաժիշտներ: Այս կարճ ժամանակահատվածում նվագախումբը հասել է մեծ հաջողությունների, ունեցել է բազում համերգներ Հայաստանում, այդ թվում Գյումրիում, համագործակցելով կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի հետ:

2022-ի հոկտեմբերին Ֆրանսիայում՝ Վալանս, Լեոն, Նիցցա, Գրենոբլ և այլ քաղաքներում, կայացել են նվագախմբի առաջին միջազգային հյուրախաղերը, որոնք շատ բարձր են գնահատվել Ֆրանսիացի ունկնդրի կողմից:

2023-ի ավարտին նվագախումբն իրականացրել է համերգ հարազատ Չայկովսկու դպրոցի դահլիճում: «Երևան-Փարիզ, Փարիզ-ամանոր» խորագիրը կրող համերգը յուրահատուկ էր 2 պատճառով: Նախ նվագախումբը հաղթահարեց մի բարդ ստեղծագործություն՝ կատարելով Կամիլ Սեն Սանսի «Կենդանիների կառնավալը»: Նվագախումբը պատիվ ունեցավ ելույթ ունենալ տաղանդավոր դաշնակահարներին Լիլի Զաքարյանի և Անահիտ Դիլբարյանի հետ:

«Չայկովսկի կամերային նվագախմբի» հաջորդ նվաճումը՝ համատեղ համերգն է հանրահայտ «ԿԱԴԱՆՍ» անսամբլի հետ:

Հարկ է նշել, որ դպրոցում բացի Չայկովսկի Կամերային նվագախմբից գործում են նաև սիմֆոնիկ և փողային նվագախմբեր, ջութակահարների անսամբլ, երգչախումբ ու ջազ-բենդ: Դպրոցը բարձր է պահում իր վարկանիշը տնօրեն Մարտուն Կոստանդյանի կրեատիվ ու գրագետ աշխատանքի շնորհիվ:

Ապրիլի 19-ին տեղի ունեցած «Под яблонью зеленой» խորագրով համերգը, որին ներկա էին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Արա Խզմալյանը և մի շարք հյուրեր Ռուսաստանից: Այն վարեց



Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի «Չայկովսկի կամերային նվագախումբ», դիրիժոր՝ Դավիթ Մարուխյան



երաժշտագետ Մարգարիտա Բաղդասարյանը երկու լեզվով՝ հայերեն և ռուսերեն:

Համերգի ընթացքում ելույթ ունեցան մենակատարներ՝ Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտական դպրոցի, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ իրականացվող, «Հայաստանի Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում» ծրագրի մասնակիցներ, Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի Գառզուի անվան արվեստի դպրոցի և Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի Վալերի Սարգսյանի անվան երաժշտական դպրոցի սաները: Նմանատիպ համագործակցությունը Երևանի և մարզերի դպրոցների միջև նպաստում է երաժշտական կապերի ամրապնդմանը և սաների մասնագիտական որակի բարձրացմանը:

Համերգն ուներ բավականին ընդգրկուն ծրագիր: Առաջին բաժնում հնչեց Պյոտր Իլիչ Չայկովսկու Սերենադը լարայինների համար (Դո-Մաժոր, 4 մաս), դիրիժոր՝ Դավիթ Մարուխյան: Իսկ երկրորդ բաժնում Դավիթ Մարուխյանի ղեկավարությամբ լարային նվագախմբի հետ համդես եկան մենակատարները:

Յոհան Սեբաստիան Բախի երկու ջութակի և լարային նվագախմբի համար Ռե-մինոր Կոնցերտը կատարեցին Չայկովսկու անվ. ՄԵՄԴ-ի սաներ Եվա Հարությունյանն ու Սառա Հարությունյանը (դասատու՝ պրոֆեսոր Արտաշես Սկրտչյան): Ալեսանդրո Մարչելլոյի հոբոյի և նվագախմբի համար Կոնցերտի 2-րդ մասը թավջութակի համար փոխադրմամբ կատարեց Չարենցավանի Գառզուի անվ. արվեստի դպրոցի սան Ալեքս Նազարյանը (դասատու՝ Մելինե Ալոյան): Տոմազո Ալբինոնիի շեփորի և նվագախմբի համար Մի բեմով մաժոր Կոնցերտի 3-դ և 4-րդ մասերը կատարեց Սևանի Վալերի Սարգսյանի անվ. երաժշտական դպրոցի սան Արտյոն Ավետիսյանը (դասատու՝ Գուրգեն Բաբայան): Միշել Մանգանիի Ռոմանսը սաքսոֆոնի համար փոխադրմամբ կատարեց Չայկովսկու անվ. ՄԵՄԴ-ի սան Միքայել Հարությունյանը (դասատու՝ պրոֆեսոր Ալեքսանդր Մանուկյան): Անտոնիո Վիվալդիի երկու ջութակի և նվագախմբի համար լա մինոր Կոնցերտը կատարեցին Չայկովսկու անվ. ՄԵՄԴ-ի սաներ Ինգա Հովհաննիսյանը և Ասյա Անիսիմովան (դասատու՝ պրոֆեսոր Էդուարդ Թադևոսյան):

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ
Երաժշտագետ, Խ.Արոյանի անվ. ԳՊՄԴ դոցենտ

Աշխարհի բնմորում գալիս ավելականը՝ Գարի Զյոսայանը պատմում է Հայի մասին

րոպա է եկել միջնադարյան հայ երաժշտությունից: Իսկ մեկ այլ ֆրանսիացի՝ արդեն իռլանդական հայագետ, թարգմանիչ Ժան-Պիեռ Մահեն իր հարցազույցներում ասել է բազմիցս. **«Եթե հայ ազգն ուրիշ ոչինչ չստեղծեր, Նարեակացու «Մատյան»-ը բավական էր, որ հայ ազգն իր տեղն ունենա համաշխարհային քաղաքակրթության մեջ»:**

- Միանշանակ: Անցյալ օրը «Գոլոս Արմենիի» թերթին հարցազույց էի տալիս: Եվ խոսք եղավ հենց Նարեակացու մասին: Հարցնում էին, թե ինչո՞ւ է ջազն այդքան հոգեհարազատ հայ ժողովրդին: Իսկ իմն համար ամեն ինչ շատ պարզ է. հայ ազգն առաջին հերթին մտածող ազգ է. ուր գնում է, տվյալ երկրի ծաղկացնում է իր ստեղծագործ համճարով: Եվ դա՝ իր մտքի շնորհիվ: Իսկ ջազն իմպուլիզացիա է, հոգևոր մտքի իմպրովիզացիա: Դա այնպիսի հոգեվիճակ է, որ մարդ, երևի, ուղիղ կապ է հաստատում Տիեզերքի հետ: Եվ այդ պահին գալիս է այն ուժը, մտքերը, որ չէի մտածում, որ կարող է գալ:

Նարեակացու «Մատյան»-ը կարդում ենք ու ապշում ենք, թե ինչպիսի իմպրովիզացիոն մտքի է տիրապետում համաշխարհային այդ անչափելի մեծությունը: Դուք կտեսնեք, թե միևնույն միտքը նա քանի՝ հարյուր անգամ կարող է իմպրովիզացիոն ձևով հաղորդել ու մեկնել:

Տեսեք, թե ինչ պատկեր է.

Եթե անգամ ամբողջ մայրի անտառներն այն Լիբանանի

**Ձողելով դարձնեմ կշեռքի լծակ
Եվ մի մաթրին իրև կշռաքար
Արարատ լեռը դնելու լինեմ,
Դարձյալ չի կարող նա իր ծանրությամբ
Իջնելով հասնել, համազուգակցել ու հավասարվել
Մյուս մաթրի հանցանքներիս հետ:**

Ի՞նչ խոսքեր են սրանք... Ի՞նչ խոսքեր են... Մարդկությանը մաքրության ճանապարհին տանող խոսքեր են: Եվ այսպիսի պատկեր չեք գտնի որևէ այլ տեղ...

- Մատենորո, այսպիսի հարց են ուզում ուղղել. Ալան Հովհաննեսը համարվում է ամերիկյան սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը, բայց իր երաժշտության մեջ լսում ենք մեր միջնադարյան շարականները: Կարո՞ղ ենք ասել, որ Դուք էլ ջազ երաժշտություն ստեղծագործում եք՝ սնվելով մեր միջնադարյան երաժշտությունից, մեր հոգևոր ակունքներից:

- Միանշանակ: Պարտադիր. իմ ստեղծագործության արմատները գալիս են մեր միջնադարյան երաժշտությունից: Մակար Եկմալյանի ստեղծագործություններում ներկա են մեր հոգևոր ակունքները, շա՛տ մեծ կապ կա, շա՛տ շա՛տ մեծ կապ կա՝ հոգևոր մտածելակերպի, լադային մտածելակերպի, հարմոնիկ մտածելակերպի առումով: Չարմանալու բան է, որովհետև Եկմալյանի երաժշտությունը աշխարհի լավագույն հոգևոր երաժշտության շարքին է դասվում: Եվ, եթե մի փոքր անալիզ անենք Եկմալյանի

երաժշտությունը, դա մի մեծ գանձարան է, որտեղ երաժիշտները կարող են քաղել շատ նյութեր, և այդ ծառը շատ պտուղներ կարող է տալ տարբեր երանգներով և գույներով: Եկմալյան, Կոմիտաս, Խաչատուրյան... Ինչ խոսք, մանկուց ականջս լցված է եղել այդ երաժշտությունով: Ինչու չէ՞, Ռախմանինով: Եվ ես երբեմն ասում եմ. Ռախմանինովը ճիշտ է, հայ չէ, բայց նրա երաժշտությունն այնքան համամարդկային է, այնքան հոգեհարազատ, որ ես դրանում հայկական երաժշտական մտածողություն եմ տեսնում և զգում: Սա՛ է արվեստի իսկական մեծությունը:

Ի՞նչ կմաղթեք արվեստագետների նոր սերնդին:

-Սրանք պետք է ծառայեն արվեստին, և բնմում երաժշտություն ցույց տան, այլ ոչ թե իրենց:

...Այսպես է ապրում և արարում մատենորո Գարի Զյոսայանը, ում ստեղծագործությունները, վստահ ենք, դարերում էլ են աշխարհին պատմելու հայկական քաղաքակրթության մասին: Իսկ Հայաստանն այն երկիրն է, որտեղ Աստծո և Մարդու միջև հաստատվեց սրբազան ուխտը. գուցե հենց սրանից է գալիս տաղանդավոր հայ արվեստագետների ինքնատիպությունը:

ՀԱՍՄԻԿ ՊՈՐՈՍՅԱՆ
Հայաստանի Ժուռնալիստների միության անդամ
Լուսանկարները՝ Խանդուք Պարույրյանի

Լոս Անջելեսի, Գրանադա Հիլս քաղաքի մանկապարտեզ

Smart Kids Academy

Ազգը հիշողություն ունի, իսկ դրա գրավականը նոր սերունդն է, որի դաստիարակության շնորհիվ է, որ ապագա է կերտվում: Ահա, այս հոգեբանությամբ են առաջնորդվում Լոս Անջելեսի, Գրանադա Հիլս քաղաքի “Smart Kids Academy” մանկապարտեզի մանկավարժ դաստիարակները Գոհար Վարդանյանի տնօրինությամբ: Հայոց Մեծ ցեղասպանության 108-րդ տարելիցի կապակցությամբ, մանկապարտեզի անձնակազմի ջանքերի շնորհիվ, նրա գեղեցիկ մտահղացումն իրականություն դարձավ: Հերթական միջոցառումը փոքրիկների համար դարձավ իմաստավոր մի օր:

Եղեմնի հուշարձանի մակետը, մանկապարտեզի գեղեցիկ խաղահրապարակի ամենահուզիչ անկյունն էր դարձել այդ օրը: Տեր Տաթև քահանա Տետերյանը հրավիրվել էր օրհնելու և մանկապարտեզի սաների հետ աղոթելու, ոգե-



Լոս Անջելեսի, Գրանադա Հիլս քաղաքի “Smart Kids Academy” մանկապարտեզ

կոչելու մեկ ու կես միլիոն հայ անմեղ նահատակների հիշատակ:

Իհարկե փոքրիկներն այդ պահին, երբ ինքնաբերաբար հուզված ծաղիկներ էին դնում հուշարձանի սյուների առջև, լիովին չէին հասկանում իրենց արարքի էությունը, իհարկե ոչ: Սակայն նրանք իրենց հետ ապագա էին տանում այդ օրն ու այն հիշողությունը, որը նրանց արժանի մարդ ու քաղաքացի լինելու և մեկ առիթ էր:

ԱՆՈՒՇ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Ժուռնալիստ, քանոնահար, դաշնակահար
Լոս Անջելես, ԱՄՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Արս Լուճա» դուետ. «Հայկական կամերային երաժշտության անթոլոգիա»

Մարտի 24-ին «Մեցցո» ակումբում տեղի ունեցավ «Արս Լուճա» դուետի՝ «Հայկական կամերային երաժշտության անթոլոգիա» հեղինակային նախագծի 2-րդ մասի շնորհանդեսը: «Հայկական կամերային երաժշտության անթոլոգիա» ծրագիրը հայ երաժշտության պատմության մեջ իր ձևով և բովանդակությամբ միակն է: Ծրագրի նպատակն է մեկ տեղում հավաքագրել, ձայնագրություննել հայ ակադեմիական կամերային երաժշտությունը՝ պատմության ստեղծման ակունքներից մինչև մեր օրեր:

Ծրագրի ստեղծման և իրականացման գաղափարը Արս լուճան դուետինն է՝ ի դեմս Արամ Թալալյանի և Ջուլիետա Վարդանյանի:

Ծրագիրը բաղկացած է մի քանի մասից: 2013-ին «Արս լուճա» դուետը հաջողությամբ ավարտեց նախագծի 1-ին մասը: Այն կազմված էր 60 հայ դասական կոմպոզիտորի ստեղծագործություններից՝ գրված թավջութակի և դաշնամուրի համար, ամփոփված 12 ձայնասկավառակում: Ծրագրի 2-րդ մասը ներառում է 12 ձայնասկավառակ, կազմված հայ կոմպոզիտորների 41 դաշնամուրային տրիոներից (ջութակ, թավջութակ և դաշնամուր): Ձայնասկավառակներից մեկը ներառում է հայ կին կոմպոզիտորների՝ Գայանե Զեքուտարյանի, Գեղունի Զբչյանի, Անահիտ Կոստանյանի, Սոֆա Ազնաուրյանի, Արաքս Մաթևոսյանի, Սվետլանա Ալեքսանյանի, տրիոները:

Такой разный Холопов

Ю. Н. Холопов., О русской и зарубежной музыке: Статьи. Материалы. Издательство: Научно-издательский центр "Московская консерватория", 2022.

В настоящем сборнике, приуроченном к 90-летию юбилею Ю. Н. Холопова (1932–2003), продолжается публикация его трудов, многие из которых не издавались вовсе или, по меньшей мере, в России. Напечатанные в разные годы за рубежом на немецком языке, они впервые воспроизводятся по-русски — на основе авторских рукописей из архива ученого или (при отсутствии таковых) в переводе признанными в соответствующей научной сфере специалистами. Разные по объему, стилю, персоналиям, тексты посвящены многообразным вопросам, но доминирует ладогармоническая проблематика и особенно проблемы современной гармонии, которой Ю. Н. Холопов занимался всю жизнь.

Издание адресовано профессиональным музыкантам, студентам музыкальных учебных заведений и всем, кого интересует эволюция музыкального языка.


Данное издание, как это ясно из названия, столь широко по своей тематике, что не поддается конкретизации ни по какому — единственному — показателю: будет ли это историческая принадлежность или персоналия, время написания или жанр текстов, научная проблематика или... Не станем множить перечень того, что все равно не работает в качестве последовательного критерия отбора — из не исчерпанных до сих пор архивных материалов Ю. Н. Холопова или уже публиковавшихся, но требующих переиздания. «Не оправдываясь» за сделанный выбор, постараемся кратко охарактеризовать то, что при всей пестроте здесь собранного вскрывает логику музыкальной эволюции на ее эпохальных поворотах, но одновременно, в другом ракурсе, может быть воспринято как творческий портрет ученого — мозаичный, но в главном близкий к оригиналу.

Рождественский Г. Н. Глоссы (Комментарии)

Глоссы (Комментарии): Практическое руководство к более или менее вразумительному исполнению слишком хорошо известных, просто известных, малоизвестных и

никому не известных произведений. Издательство: Научно-издательский центр "Московская консерватория", 2023.

Геннадий Николаевич Рождественский (1931–2018) внес неоценимый вклад не только в оркестровое исполнительство, но и в литературу о музыке и других искусствах. На страницах его книг нашли отражение выступления с ведущими симфоническими коллективами мира.



«Глоссы» — наиболее масштабный труд Рождественского, которому он посвятил последние годы жизни, стремясь поделиться с коллегами своим более чем полувековым опытом. Книга имеет трехчастную структуру: «I. Дирижерский дневник», «II. Интермеццо», «III. Parerga e paralipomena». В ней рассматриваются произведения 93-х композиторов, исследуются 533 сочинения. Аудиоприложение содержит 73 записи, в том числе лекцию Г. Н. Рождественского о Четвертой симфонии Шостаковича.

Издание адресовано всем интересующимся дирижерским искусством.

«Моя книга «Дирижерская аппликатура» была напечатана в 1974 году ленинградским отделением издательства «Музыка» тиражом 12455 экземпляров. Книга довольно быстро разошлась и сейчас представляет собой достаточный разлет. Получая многочисленные письма читателей, я решил выпустить в свет новое издание, в сильной степени «расширенное и дополненное». По сравнению с первым изданием, где речь идет о сочинениях только трех композиторов — Стравинского, Прокофьева и Шостаковича, в новом издании рассматриваются произведения 93 композиторов, исследуются 533 сочинения. В том числе, в нем анализируются все 15 симфоний Шостаковича и его же Первый концерт для виолончели с оркестром, составленный мною концертный сценарий «Гамлет», «Песнь о песах», сюиты из музыки к фильмам «Златые горы», «Пять дней и пять ночей», «Новый Вавилон», балеты «Золотой век» и «Светлый ручей», оперы «Нос» и «Катерина Измайлова», оркестровая редакция оперы Мусоргского «Хованщина», а также «6 романсов на стихи английских поэтов» ор. 62.

Наряду с чисто дирижерскими анализами (в основном посвященными проблемам соотношения темпа и пульса), в книгу включены подробные описания различных редакций Первой симфонии Глазунова, Первого фортепианного концерта Рахманинова, «Ноктюрнов» Дебюсси, его же Кантаты «Дева-избранница» что, на мой взгляд, полезно знать всем интересующимся не только дирижерским искусством, но и чисто музыковедческими проблемами, так как дает возможность либо выбора той или иной редакции для своей исполнительской деятельности, либо создания некоей «комбинативной версии», наиболее полно отвечающей эстетическим принципам дирижера. К примеру говоря, такая ситуация складывается при изучении второй редакции балета Стравинского «Петрушка» (в особенности его последней страницы) или второй редакции отдельно изданного Финала его же балета «Весна священная». Иногда (в особенности при анализе партитур Брукнера и Шумана, а порой и Чайковского) я прибегаю к ссылкам на записи великих дирижеров прошлого. Должен сказать при этом, что никогда не слушаю никаких записей до начала «застольной» работы над партитурой, а только лишь после нее, а иной раз и после первого исполнения, стараясь избежать возможного отрицательного воздействия. Я никогда не изучаю партитуру за роялем (не сделал исключения и для сложнейшей, я бы даже сказал, головоломнейшей Второй симфонии талантливейшего англичанина Питера Максвелла Дэвиса).

Несколько раз в тексте книги я помещаю свои «постскриптумы» (Р. S.). В них, как правило, изложены соображения, возникшие через много лет после написания первичных текстов. Их стилистика разная, поэтому я не хотел «впавать» новые тексты в старые.

При работе над книгой моим большим подспорьем был замечательный 20-томный «Новый музыкальный словарь Гроува» (Лондон, 1980), основанный в 1878 году сэром Джорджем Гроувом. Это, без всяческих сомнений, лучший

музыкальный словарь в мире. Но, как гласит русская пословица, «и на старуху бывает проруха...» — в словаре Гроува отсутствует автор популярнейшего «хита», носящего имя его автора — «Чардаш Монти». При таких обстоятельствах я считаю наличие в словаре Гроува моей фамилии необъяснимым «нонсенсом»!

Стилистически мои «Глоссы» 1. в известной степени соприкасаются с книгой Георгия Викторовича Адамовича «Комментарии» 2. Если в первой части книги («Дирижерский дневник») во главу угла ставится «темпо-пульсовый» анализ и необходимые «ретуши», базирующиеся на более чем полувековом исполнительском и педагогическом опыте автора, то вторая часть («Интермеццо») — некий мостик между первой и третьей частями, уводящий читателя от сферы чистого анализа в сферу в какой-то степени автобиографическую и подготавливающий появление третьей, финальной части («Parerga e paralipomena» 3), посвященной различного рода музыкальным курьезам.

Во второй части книги под названием «Интермеццо» я поместил несколько коротких фрагментов из своего сборника «Преамбулы», напечатанного в 1989 году московским издательством «Советский композитор» сравнительно небольшим тиражом и по этой причине довольно труднодоступного сегодня. В этих фрагментах речь идет о произведениях, редко звучащих в наших музыкальных театрах и на концертной эстраде по причинам мне совершенно непонятным. Материал также почерпнут из моих вступительных слов, сказанных в период с 1975 года по 2017-й. Остальные фрагменты также представляют собой сокращенные варианты моих вступительных слов. Наличествуют во второй части и портреты — Чарлз Мартин Лифлер и другие, выписанные несколько в «отстраненной» манере, или, пользуясь лексикой музыкальной, в более или менее «завуалированной» тональной сфере, допускающей изысканные модуляции в «постимпрессионистском» стиле... Вышло это или нет, не мне судить... К портретам я также причисляю главы «Сен-Санс» и «Велимир Хлебников»...

В «Глоссах», в особенности во второй и третьей частях книги, я несколько раз осуществляю «экскурсы-вылазки» на «территории» смежных с музыкой искусств — изобразительного и литературы. Они невелики по объему (за исключением эссе о поэте Эзре Паунде, творчеству которого я ранее посвятил несколько страниц в своей книге «Мозаика»), но играют определенную роль в построении формы книги в целом, обеспечивая необходимый контраст между тремя ее частями, равно как и внутри частей... К этим «экскурсам-вылазкам» следует приравнять «библиофильские» отклонения от темы (в первую очередь, о творчестве художника книги Александра Алексеева), на первый взгляд могущие показаться излишними, а на деле выполняющие функции своеобразных «познавательных инъекций», безусловно способствующих расширению кругозора читателя и приобщающих его к славной «когорте» любителей книги.

Во главе этой «когорты» я без сомнения ставлю знатока иллюстрированной книги (в первую очередь, французской), Санкт-петербургского математика, академика Марка Ивановича Башмакова, оставившего далеко позади своих российских и зарубежных коллег. Я имею в виду его книгу (скорее книжищу!) под названием «Книга мастера» («Иллюстрированные книги художников Парижской школы 1900–1956». СПб.: Альфарет, 2016), напечатанную в количестве 10 экземпляров (!), одним из которых Марк Иванович щедро одарил меня. В этом труде скрупулезно описаны 300 книг из собрания М. И. Башмакова, выставленных на экстраординарной выставке в Государственном Эрмитаже в 2016 году. Другая книга Марка Ивановича («Художник и книга». СПб.: Государственный Эрмитаж, 2015) содержит описание еще 76 раритетов из его уникального собрания.

Для сравнения скажу, что вышедшая в Амстердаме книга о собрании голландского книголюбца Луи Коопмана «Voix et Visions» («Голоса и видения», 2009) содержит описания 85 книг (против башмаковских 376!) и при всем желании не может быть поставлена близко к собранию последнего. О других собирателях можно не вспоминать...

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԹՅՈՒՆ ԻՐԱՎԱՆԱՅՆՈՂ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Վկայական N 03Ա059505 տրված 7.04.2003թ.
ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ՝ Կոմիտայի անվ. ԵՊԿ ՊՈԼԿ
ՍԵՐԳԵՅ ՍԱՐԱՅՅԱՆ, ԳՈՂԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Գլխավոր խմբագիր՝ ՄԱՐԿԻՐՈՍ ԿՐԱՎՈՍՅԱՆ
Թողարկման պատասխանատու՝ ԳՈՂԱՐ ՇԱԳՈՅԱՆ
Խմբագիրներ՝ ԱՆՈՒՇ ԿՐԱՎՈՍՅԱՆ (հայ. լեզու),
ՍՈՆԱ ԱՆՆԱՌԻՅԱՆ (ռուս. լեզու)
Գեղարվեստական խմբագիր՝ ԳՈՂԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արտատպումը միայն «Երաժիշտ» ամսաթերթի գրավոր արտոնությամբ: Խմբագրությունը միշտ չէ, որ համաձիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն գրախոսվում և չեն վերադարձվում:

Ծավալը 8 էջ: Ստորագրված է 25.04.2023:
Գինը 200 դրամ: Տպագրանակը՝ 101:

Մեր կայքում տեղ գտած հրապարակումների հեղինակային իրավունքը պատկանում է րաջանապետ «Երաժիշտ» ամսաթերթի «ԵՊԿ հրատարակչությանը» (conservatory.am): Այլ ԶԼՄ-ներում սույն կայքի հրապարակումներից որևէ մեկը ամբողջական վերահրապարակելու համար անհրաժեշտ է «ԵՊԿ հրատարակչության» (conservatory.am) համաձայնությունը: Լրատվամիջոցները կարող են «Երաժիշտ» ամսաթերթից մեջբերումներ վերահրապարակել միմիայն հատվածաբար՝ պարտադիր օգտագործելով հիպերհղում:

Գովազդի տեղադրման համար դիմել խմբագրությունն նշված հասցեով.

0001, ք. Երևան, Մարկ Գրիգորյան 2
+374 10 52 39 93+118
+ 374 55 00 21 62
http://www.conservatory.am,
E-mail: yerazhisht@gmail.com
https://www.facebook.com/Yerazhisht-newspaper-Yerevan-State-Conservatory-996490150508214/

